մի ի յորմէ. ասսի էանց Պետրոս Առաքեալն, և իբրեւ զքարընկէց մի եհաս ի տունն Մարկոս Աւետարանչի, և այն է վանքն Ասորոց, որոյ դուռն է ի հարաւ։ . . . արդ սա ասի չինեալ ի թագաւորաց քրիստոնէից, եւ է սագաշէն գեղեցիկ և վայելուչ անուանակոչեալ Ս. Աստուածածին» (Հան. էջ 237)։

7. Ս. Պետրոսի բանը. — *Ս. Պետրոսի անուամբ երրորդ եկեղեցի մը կար Երուսաղէմ քաղաքին պարիսպին ներսը որ առաջին անգամ վկայուած է միայն ԺԲ. դարուն։ Ան կը գտնուէր Դաւթի բերդին (*) եւ Սիոնի դրան շրջակայքին հետ հաղորդակցութիւն ունեցող փողոցի մը վրայ (որ Բերդէն դէպի Տաճար կ'երթայ), հրէական եւ հայկական արդի թաղերուն սահմաններուն մէջ։ Նոյն եկեղեցին չափով մը զարդարուած էր և ունէր խոր նկուղ մը որ կը ներկայացնէր այն բանտը ուր Պետրոս Առաքեալը Հերովդէսէն բանտարկուած ըլլալով հրաշքով մը ազատած է։ Քրիստոսի աստիճաններով սանդուխ մը կը տանի այս բանտին խորը ուր կայ սեղան մը որուն վրայ ուխտաւորները կ'աղօթէին։ Մատուռին դրան ճակատամէջը գրուած են լատիներէն սա չորս տողերը այս դէպքին վերաբերմամբ եւ զոր հայերէնի կը թարգմանենք. «Զգեստաւորուէ ով Պետրոս, ոտք ելիր, գնա՛ անարգել, վասն զի շղթաներուդ կապերը քակուած են։ Ստուգութեամբ գիտեմ այժմ, որովհետև դուռը բացուած է ինձ համար. ո՞վ բարութիւնը Քրիստոսի, որ ազատութիւն շնորհեցիր ինձի»։*

(*) Khott Dâoud, Դաւթի փողոց, որ **Պապ էս-Սիլսիլէի** էն կ'երթայ **Պապ էլ-Խալիլ**։